# Հավելյալ Ապահովության Եկամուտ (SSI)

## Բովանդակություն


| | |
|---|---|
| Հավելյալ Ապահովության Եկամուտ (SSI) | 1 |
| Ի՞նչ է SSI՝ | 1 |
| SSI ստանալու կանոններ՝ | 2 |
| Ինչպե՞ս դիմել SSI համար՝ | 4 |
| Դուք կարող եք այլ օգնություն ստանալու հնարավորություն ունենալ՝ | 5 |
| Դուք կարող եք Սոցիալական Ապահովություն ստանալու հնարավորություն ունենալ՝ | 7 |
| Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ | 7 |


## Հավելյալ Ապահովության Եկամուտ (SSI)

Այս տեղեկագրում բացատրվում է, թե ինչ է Հավելյալ Ապահովության Եկամուտը (SSI), ո՞վ կարող է այն ստանալ, և ինչպե՞ս դիմել: Ձեզ համար հատկանշական տեղեկատվության համար խոսեք Սոցիալական Ապահովության ներկայացուցչի հետ:

Սոցիալական Ապահովության Վարչությունը կառավարում է տվյալ ծրագիրը, սակայն SSI չի վճարվում Սոցիալական Ապահովության հարկերի միջոցով: SSI ֆինանսավորվում է ԱՄՆ Գանձապետարանի ընդհանուր միջոցներից, և ոչ Սոցիալական Ապահովության միջոցներից:

## Ի՞նչ է SSI՝

SSI կատարում է ամսական վճարներ ցածր եկամուտ և քիչ միջոցներ ունեցող անձանց, որոնք՝

- 65 տարեկան են կամ ավելի բարձր;
- Կույր են;
- Հաշմանդամ են:

Եթե Դուք դիմում եք SSI համար, ապա պետք է նաև ծանոթանաք Ի՞նչ Դուք Պետք է Իմանաք Երբ Ստանում եք Հավելյալ Ապահովության Եկամուտ (SSI) (*What You Need To Know When You Get Supplemental Security Income (SSI)*) տեղեկագրին (Հրատարակություն թիվ 05-11011):

***ՆՇՈՒՄ՝*** *Հաշմանդամ կամ կույր երեխաները, որոնց ծնողները ունեն ցածր եկամուտ կամ միջոցներ նույնպես կարող են իրավասու լինել Հավելյալ Ապահովության Եկամտի նպաստ ստանալու համար: SSI հիմնական գումարը նույնն է ամբողջ երկրում: Սակայն շատ նահանգներ այդ հիմնական գումարին ավելացնում են իրենց գումարները: Կարող եք զանգահարել մեզ Ձեր նահանգի գումարը պարզելու համար:*

## SSI ստանալու կանոններ՝

### Ձեր եկամուտը և միջոցները՝

Ձեր SSI ստանալու հարցը կախված է Ձեր եկամուտներից և միջոցներից (Ձեր սեփականությունից):

### Եկամուտ՝

Եկամուտը դա այն գումարն է, որը Դուք ստանում եք, ինչպես օրինակ աշատավարձը, Սոցիալական Ապահովության նպաստները և կենսաթոշակները: Եկամուտը նաև ընդգրկում է այնպիսի բաներ ինչպես սնունդն է և կացարանը: Եկամտի սահմանաչափը, որը կարող եք ստանալ յուրաքանչյուր ամիս և շարունակել ստանալ SSI վճարները, կախված են մասամբ Ձեր բնակվելու վայրից: Դուք կարող եք զանգահարել մեզ Ձեր նահանգի համար սահմանված եկամտի սահմանաչափերի մասին տեղեկանալու համար:

Սոցիալական Ապահովությունը, հաշվի չի առնում Ձեր ամբողջական եկամուտը՝ Ձեր SSI իրավասությունը որոշելիս: **Օրինակ՝** մենք հաշվի **չենք** առնում՝

- Ձեր կողմից ամեն ամիս ստացվող եկամուտների մեծ մասի առաջին $20-ը;
- Ձեր աշխատանքից ամեն ամիս վաստակած առաջին $65-ը, և $65-ից բարձր վաստակած գումարի կեսը;
- Հավելյալ Սննդառության Աջակցության Ծրագրի (SNAP) նպաստները, նախկինում հայտնի որպես պարենային կտրոններ;
- Մասնավոր շահույթ չհետապնդող կազմակերպությունների կողմից ստացված կացարանը; և
- Տան էլեկտրաէներգիայի ծախսերի համար ստացված օգնության մեծ մասը:

Եթե ամուսնացած եք, մենք ներառում ենք Ձեր ամուսնու/կնոջ եկամտի և միջոցների մի մասը՝ SSI համար Ձեր իրավասության վերաբերյալ որոշում կայացնելիս: Եթե դեռ չի լրացել Ձեր 18 տարեկանը, ապա մենք ընդգրկում ենք Ձեր ծնողների եկամտի և միջոցների մի մասը: Եվ եթե Դուք հանդիսանում եք հովանավորվող ոչ քաղաքացի, ապա մենք կարող ենք ընդգրկել Ձեր հովանավորի եկամուտը և միջոցները:

Եթե Դուք ուսանող եք, ապա Ձեր կողմից ստացվող որոշակի աշխատավարձ կամ կրթաթոշակ **կարող է** հաշվի չառնվել:

Եթե Դուք հաշմանդամ եք, սակայն աշխատում եք, ապա Սոցիալական Ապահովությունը, հաշվի **չի** առնում աշխատավարձի այն մասը, որը Դուք վճարում եք այն պարագաների և ծառայությունների համար, որոնց շնորհիվ Դուք աշխատում եք: Օրինակ, եթե Ձեզ անհրաժեշտ է սայլակ, ապա այն աշխատավարձը, որը Դուք վճարել եք այդ սայլակի համար հաշվի չի առնվում որպես եկամուտ՝ SSI համար Ձեր իրավասության վերաբերյալ որոշում կայացնելիս:

Ինչպես նաև, Սոցիալական Ապահովությունը հաշվի **չի** առնում կույր անձանց կողմից աշխատանքային ծախսերի համար օգտագործված աշխատավարձերը: Օրինակ, եթե կույր անձը իր աշխատավարձից վճարում է դեպի աշխատավայր և աշխատավայրից դեպի տուն փոխադրման ծախսերի համար, ապա որպես



*(շրջել)*

փոխադրման ծախսեր աշխատավարձից վճարված գումարները հաշվի չեն առնվում որպես եկամուտ:

Եթե Դուք հաշմանդամ եք կամ կույր, ապա վերապատրաստման, կամ աշխատանքում անհրաժեշտ պարագաների գնման համար օգտագործված (կամ խնայված) որոշ եկամուտ նույնպես **կարող է** հաշվի չառնվել:

## Միջոցներ (Ձեր սեփականությունը)՝

Այն միջոցները, որոնք հաշվի են առնվում մեր կողմից Ձեր SSI իրավասությունը որոշելիս՝ ներառում են անշարժ գույքը, բանկային հաշիվները, կանխիկ գումարները, բաժնետոմսերը և պարտատոմսերը:

Դուք կարոք եք SSI ստանալ, եթե Ձեր միջոցների արժեքը կազմում է $2,000 կամ ավելի քիչ: Զույգը կարող է ստանալ SSI, եթե նրա միջոցների արժեքը կազմում է $3,000 կամ ավելի քիչ: Եթե Ձեզ պատկանում է որևէ սեփականություն, որը Դուք փորձում եք վաճառել, ապա Դուք կարող եք SSI ստանալու հնարավորություն ունենալ մինչդեռ փորձում եք այն վաճառել:

Սոցիալական Ապահովությունը հաշվի չի առնում Ձեզ պատկանող ամեն բան՝որոշելով, որ Դուք բավականաչափ շատ միջոցներ ունեք SSI իրավասություն ունենալու համար: Օրինակ՝մենք հաշվի չենք առնում՝

- Այն տունը և հողը, որտեղ Դուք բնակվում եք;
- Կյանքի ապահովագրության պոլիսը՝ $1,500 կամ ավելի քիչ անվանական արժեքով;
- Ձեր ավտոմեքենան (սովորաբար);
- Գերեզմանատեղին՝ Ձեր և Ձեր ընտանիքի անմիջական անդամների համար; և
- Մինչև $1,500 Ձեր հուղարկավորման ծախսերի մասով և մինչև $1,500 Ձեր ամուսնու/կնոջ հուղարկավորման ծախսերի մասով:

## Այլ կանոններ, որոնց պետք է համապատասխանեք՝

SSI ստանալու համար՝ Դուք պետք է բնակվեք Միացյալ Նահանգներում կամ Հյուսիսային Մարիանայի կղզիներում և լինեք ԱՄՆ քաղաքացի կամ հպատակ: Որոշ դեպքերում, ոչ քաղակացի մշտաբնակները (noncitizen residents) կարող են SSI իրավասություն ունենալ: Լրացուցիչ տեղեկատվությանը ծանոթացեք *Հավելյալ Ապահովության Եկամուտ (SSI) Ոչ Քաղաքացիների Համար (Supplemental Security Income (SSI) for Noncitizens)* տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-11051-AM):

- Եթե Դուք Իրավասու եք Սոցիալական Ապահովության կամ այլ նպաստներին, ապա Դուք պետք է դիմեք դրանց համար: Իրավասություն ունենալու դեպքում՝ Դուք կարող եք ստանալ SSI կամ այլ նպաստներ:
- Եթե Դուք բնակվում եք որոշակի տիպի հաստատություններում, ապա Դուք կարող եք SSI ստանալ:
- Եթե Դուք բնակվում եք քաղաքի կամ քաունթիի ծերերի կամ հաշմանդամների համար գիշերօթիկում (rest home), նախկին բանտարկյալների, հոգեկան հիվանդների, թմրամոլների, հարբեցողների վերականգնման հաստատությունում (halfway house) կամ որևէ այլ հաստատությունում, օրինակ ինչպես բանտը կամ կալանատունը, ապա Դուք սովորաբար չեք կարող ստանալ SSI: Սակայն կան որոշ բացառություններ՝
  - — Եթե Դուք բնակվում եք հասարակական հիմունքով գործարկվող համայնքային բնակատեղում, որը սպասարկում է 16 անձից ոչ ավել, ապա Դուք կարող եք ստանալ SSI:
  - — Եթե Դուք բնակվում եք հասարակական հաստատությունում՝ հիմնականում որևէ հաստատված կրթական ծրագրին կամ աշխատանքային վերապատրաստմանը հաճախելու



*(շրջել)*

նպատակով, որը կօգնի Ձեզ աշխատանք գտնելու հարցում, ապա Դուք կարող եք ստանալ SSI:

— Եթե Դուք բնակվում եք արտակարգ իրավիճակների կացարանում (public emergency shelter) անտունների համար, ապա Դուք կարող եք ստանալ SSI:

— Եթե Դուք բնակվում եք հասարակական կամ մասնավոր հաստատությունում, և Medicaid-ը վճարում է Ձեր խնմաքի կեսից ավելին, ապա Դուք կարող եք փոքր SSI նպաստ ստանալ:

— Եթե Դուք ունեք ձերբակալության չկատարված հրաման ՝ քրեական հետապնդումից կամ ազատազրկումից խուսափելու նպատակով փախուստի, ինչպես նաև կալանքից կամ դեպքի վայրից փախուստի համար, ապա Դուք սովորաբար չեք կարող ստանալ SSI:

— Եթե  Դուք խախտել եք դաշնային կամ նահանգային օրենքի ուժով սահմանված փորձաշրջանի կամ պայմանական վաղաժամկետ ազատման պայմանը, ապա Դուք սովորաբար չեք կարող ստանալ SSI:

## Ինչպե՞ս դիմել SSI համար՝

Եթե Դուք ծրագրում եք դիմել SSI համար, ապա Դուք կարող եք Ձեր դիմումի մեծ մասը լրացնել՝ այցելելով մեր կայքէջը՝ ***www.socialsecurity.gov/applyforbeneftis*** հասցեով: Դուք կարող եք նաև զանգահարել մեզ մեր **1-800-772-1213** անվճար հեռախոսահամարով՝ Սոցիալական Ապահովության ներկայացուցչի հետ պայմանավորվածություն ձեռք բերելու համար: Եթե Դուք ծրագրում եք դիմել Սոցիալական Ապահովության կամ SSI հաշմանդամության նպաստներին, ապա Դուք կարող եք սկսել մեր՝ ***www.socialsecurity.gov/disability*** կայքէջից:

Ծնողները կամ խնամակալները սովորաբար կարող են դիմել իրենց մինչև 18 տարեկան կույր կամ հաշմանդամ երեխաների հմար: Որոշ դեպքերում, այլ երրորդ կողմեր կարող են դիմել երեխաների համար:

Դիմելիս՝ պետք է Ձեզ հետ ունենաք որոշակի փաստաթղթեր: Անգամ եթե չունեք ստորև ցանկում ներկայացված բոլոր փաստաթղթերը, միևնույնն է դիմեք: Սոցիալական Ապահովության գրասենյակի անձնակազմը կարող է օգնել Ձեզ, անհրաժեշտ փաստաթղթերը ձեռք բերելու հարցում: Խնդրում ենք ներկայացնել՝

- Ձեր Սոցիալական Ապահովության քարտը կամ Ձեր Սոցիալական Ապահովության համարի հաշվառումը;
- Ձեր ծննդյան վկայականը, կամ Ձեր տարիքը հավաստող այլ փաստաթուղթ;
- Ձեր բնակության վայրի վերաբերյալ տեղեկատվություն, օրինակ ինչպես Ձեր գրավադրման (mortgage) կամ վարձակալության և բնակարանատիրոջ անունը;
- Աշխատավարձի կտրոնները, բանկային գրքույկները, ապահովագրության պոլիսները, հուղակավորման միջոցների հաշվառումը, և Ձեր եկամուտի կամ սեփականության վերաբերյալ առկա այլ տեղեկատվություն:
- Ձեր կողմից այցելած բժիշկների, հիվանդանոցների, բուժարանների անունները և հասցեները՝ եթե Դուք SSI համար դիմում եք Ձեր կույր կամ հաշմանդամ լինելու հանգամանքներից:
- ԱՄՆ քաղաքացիության կամ իրավասու ոչ քաղաքացու կարգավիճակի հավաստիքը; և
- Ձեր վճարագիրքը կամ այլ փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս Ձեր բանկային, վարկային միավորման կամ խնայողությունների կամ փոխառությունների հաշվի համարը:

Եթե հաստատվում է Ձեր SSI իրավասությունը, ապա Ձեր վճարները պետք է ստանաք էլեկտրոնային եղանակով:



*(շրջել)*

Մենք կարող ենք վճարները կատարել ուղղակի ավանդադրման, Direct Express® քարտային ծրագրի, կամ Electronic Transfer Account-ի միջոցով: Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք՝ ***www.GoDirect.org*** կայքը:

## Նշում կույր կամ հաշմանդամ անձանց համար՝

Եթե Դուք կույր եք կամ հաշմնադամ և աշխատում եք, ապա կան հատուկ կանոններ, որոնք կօգնեն Ձեզ: Դուք կարող եք շարունակել ստանալ SSI վճարները մինչդեռ աշխատում եք: Ավելի շատ գումար վաստակելով՝ Ձեր SSI վճարները կարող են կրճատվել կամ դադարեցվել, սակայն Դուք կկարողանաք պահպանել Ձեր Medicaid ծածկույթը:

Դուք նաև կարող եք ի վիճակի լինել առանձնացնելու որոշակի գումար աշխատանքային նպատակի կամ ուսումնական հաստատության համար: Այս դեպքում առանձնացված գումարը չի նվազեցնի Ձեր SSI վճարման ենթակա գումարը:

SSI համար դիմող կույր կամ հաշմանդամ անձինք կարող են ստանալ անվճար հատուկ ծառայություններ, որոնք կօգնեն նրանց աշխատելու հարցում: Այդ ծառայությունները կարող են ներառել՝ խորհրդատվություն, աշխատանքի վերապատրաստություն և աշխատանք գտնելու օգնություն:

Լրացուցիչ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ Աշխատել Հաշմանդամ Լինելով. Ինչպե՞ս Մենք Կարող ենք Օգնել *(Working While Disabled—How We Can Help)* տեղեկագրից (Հրատարակություն թիվ. 05-10095-AM):

## Բողոքարկելու իրավունք՝

Եթե համաձայն չեք Ձեր պահանջ դիմումի վերաբերյալ մեր կողմից ընդունված որոշմանը, ապա կարող եք բողոքարկել այն: Ձեր կողմից ձեռնարկվող քայլերը նկարագրված են *Հավելյալ Ապահովության Եկամտի (SSI) մասով Ձեր Պահանջ դիմումի Վերաբերյալ Կայացված Որոշումը Հետաքննելու Ձեր Իրավունքը (Your Right To Question A Decision Made On Your Supplemental Security Income (SSI))* տեղեկագրում (Հրատարակություն թիվ 05-11008):

Դուք կարող եք ինքնուրույն վարել Ձեր SSI գործը կամ բողոքարկել Սոցիալական Ապահովության կողմից անվճար տրամադրվող աջակցության շնորհիվ: Դուք նաև իրավունք ունեք, որպեսզի որևէ մեկը Ձեզ ներկայացնի: Կան որոշակի կանոններ, թե ո՞վ կարող է Ձեզ ներկայացնել և թե ի՞նչ կարող է Ձեր ներկայացուցիչը անել: Մենք Ձեր ներկայացուցչի հետ կաշխատենք, ինչպես որ աշխատելուց կլինեինք Ձեզ հետ: Դիմեք մեզ, եթե ցանկանում եք տեղեկանալ, թե ինչպե՞ս կարող եք նշանակել որևէ մեկին Ձեր անունից հանդես գալու համար: Ինչպես նաև, լրացուցիչ տեղեկատվությանը ծանոթացեք *Ներկայացուցիչ Ունենալու Ձեր Իրավունքը (Your Right To Representation) տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10075-AM) կամ մեր կայքից՝* ***www.socialsecurity.gov/representation*** հասցեով:

## Դուք կարող եք այլ օգնություն ստանալու հնարավորություն ունենալ՝

Եթե Դուք ստանում եք SSI,Դուք կարող եք նաև հնարավորություն ունենալ օգնություն ստանալու Ձեր նահանգից կամ երկրից: Օրինակ, Դուք կարող եք ստանալ Medicaid-ի, սննդի կամ այլ սոցիալական ծառայություններ: Դիմեք Ձեր տեղամասային Սոցիալական Ապահովության գրասենյակ կամ հասարակական բարեկեցության հարցերով զբաղվող գրասենյակ՝ Ձեր համայնքում հասանելի ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:



*(շրջել)*

## Հավելյալ Սննդառության Աջակցության Ծրագիր (պարենային կտրոններ) (Supplemental Nutrition Assistance Program (food stamps))

Եթե Դուք ստանում եք SSI, ապա հնարավոր է, Դուք կարողանաք օգնություն ստանալ Հավելյալ Սննդառության Աջակցման ծրագրի (SNAP) շրջանակներում, որը նախկինում հայտնի է եղել որպես պարենային կտրոններ: Եթե Ձեր տան բոլոր անդամները դիմում են SSI համար կամ ստանում են SSI, ապա Դուք կարող եք դիմել SNAP-ի համար՝ Սոցիալական Ապահովության գրասենյակում:

Եթե Դուք չեք բնակվում այնպիսի տանը, որտեղ բոլորը դիմում են կամ ստանում են SSI, ապա այցելեք ***www.fns.usda.gov/snap*** կայքը՝ դիմելու կարգին ծանոթանալու համար: Լրացուցիչ տեղեկատվությանը ծանոթացեք Սննդառության Աջակցման Ծրագրեր (*Nutrition Assistance Programs*) տեղեկագրից (Հրատարակություն թիվ 05-10100):

## Medicaid

Եթե Դուք ստանում եք SSI, ապա հնարավոր է, Դուք կարողանաք նաև Medicaid-ի ծածկույթ ստանալ, որը կօգնի Ձեզ վճարելու բժիշկի կամ հիվանդանոցի հաշիվները: Ձեր տեղամասային բարեկեցության հարցերով զբաղվող կամ բժշկական օժանդակության գրասենյակը կարող են Ձեզ տեղեկատվություն տրամադրել Medicaid-ի մասին:

## Medicare-ի համար վճարման օգնություն՝

Եթե Դուք ունեք Medicare ծածկույթ, ինչպես նաև ցածր եկամուտ և քիչ միջոցներ, ապա հնարավոր է Ձեր նահանգը վճարի Ձեր Medicare-ի ամսավճարները, և որոշ դեպքերում, այլ Medicare-ի ծախսերը, օրինակ ինչպես՝ ապահովագրական հանումները (deductable) կամ համատեղ ապահովագրությունը (coinsurance): Միայն Ձեր նահանգը կարող է որոշել, թե արդյո՞ք Դուք դրան իրավասու եք: Ձեր իրավասությունը պարզելու համար դիմեք Ձեր նահանգային կամ տեղամասային բարեկեցության հարցերով զբաղվող գրասենյակին կամ բժշկական օժանդակության (Medicaid-ի) գրասենյակին: Այդ ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկատվություն կարող եք ստանալ Medicare & Medicaid Services (CMS) կենտրոններից՝ զանգահարելով Medicare-ի՝**1-800-MEDICARE** (**1-800-633-4227**) անվճար հեռախոսահամարներով: Խլության կամ լսողության հետ խնդիրների դեպքում զանգահարեք մեր հեռատիպ (TTY)՝ **1-877-486-2048** հեռախոսահամարով:

Դուք կարող եք նաև “Extra Help” (հավելյալ օգնության) ծրագրի իրավասություն ունենալ՝ վճարելով տարեկան ապահովագրական հանումները (annual deductable), ամսավճարները և դեղատոմսերի համավճարները Medicare-ի Մաս D-ի շրջանակներում դեղատոմսային դեղորայքի վճարման մասով: Դուք կարող եք Extra Help” (հավելյալ օգնության) ծրագրի իրավասություն ունենալ՝եթե Դուք ունեք սահմանափակ եկամուտ (հասնելով դաշնային աղքատության մակարդակին) և քիչ միջոցներ: Այդ եկամտի և միջոցների սահմանաչափերը փոփոխվում են յուրաքանչյուր տարի և նույնը չեն ինչ SSI եկամուտներն ու միջոցներն են: Ներկայիս սահմանաչափերի համար դիմեք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Extra Help ծրագրին կարող եք դիմել առցանց կամ լրացուցիչ տեղեկատվություն ստանալ ***www.socialsecurity.gov/extrahelp*** կայքից: Դուք կարող եք նաև դիմել կամ խնդրել դիմումի Ձևաթուղթը հեռախոսով, կամ կարող եք դիմել Ձեր տեղամասային Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Եթե Դուք ունեք ինչպես Medicaid դեղատոմսային դեղորայքի ծածկույթ, այնպես էլ Medicare, Medicare և SSI, կամ եթե Ձեր նահանգը վճարում է Medicare-ի



*(շրջել)*

ամսավճարները, ապա Դուք ինքնաբերաբար կստանաք Extra Help ծրագիրը, և այլևս դիմելու կարիք չեք ունենա:

## Դուք կարող եք Սոցիալական Ապահովություն ստանալու հնարավորություն ունենալ՝

Եթե Դուք աշխատում եք և բավականաչափ երկար ժամանակ վճարումներ եք կատարում Սոցիալական Ապահովությանը, Դուք նաև կարող եք Սոցիալական Ապահովության նպաստների իրավասություն ունենալ SSI վճարները ստանալու հետ մեկտեղ: Կենսաթոշակային նպաստները կարող են վճարվել 62 տարեկան և ավելի բարձր անձանց և նրանց ընտանիքներին: Հաշմանդամության նպաստները վճարվում են հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքներին: Ժառանգորդի նպաստները վճարվում են մահացած աշխատողի ընտանիքներին: Եթե կարծում եք, որ կարող եք Սոցիալական Ապահովության նպաստների իրավասություն ունենալ, ապա զանգահարեք մեզ՝ Սոցիալական Ապահովության ներկայացուցչի հետ պայմանավորվածություն ձեռք բերելու համար:

## Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

## Այցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենահարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:



*(շրջել)*

## Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:



**Social Security Administration**
Publication No. 05-11000-AM | August 2017
Հավելյալ Ապահովության եկամուտ (SSI)
Supplemental Security Income (SSI) (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: